Կարմրաշեն

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան

Հեռախոս՝ +374 94180873

Կարմրաշեն գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում, Վայոց լեռան ստորոտում, Հերհեր գետի վերին հոսանքի բարձրադիր սարավանդում: Ծովի մակերևույթից բարձր է 2030 մ: Ջերմուկին սահմանակից է հյուսիս-արևելքից, Հերհերին՝ հարավ-արևելքից, հարավ-արևմուտքից՝ Մալիշկա, հյուսիս-արևմուտքից՝ Գողթանիկ գյուղերին:

Հիմնադրման տարեթիվը ստույգ չէ: Գյուղի շրջակայքում կան հնավայրեր և պատմաճարտարապետական կոթողներ: Գյուղից մեկ կմ հարավ-արևելք գտնվում է Պողոս-Պետրոս խաչքարը, հարավ–արևմուտքում Խարաբաներ գյուղատեղին է, հյուսիս-արևմուտքում՝ Գենգարա գյուղատեղին: Խաչքարերը վերաբերում են 10-13-րդ դարերին: Ղևոնդ Ալիշանը Կարմրաշենին է նույնացնում Սյունիք աշխարհի Վայոց Ձոր գավառում հիշատակվող Գուտենի գյուղը:

1963 թվականին այստեղ հիմնվել էր բանավան՝ Արփա-Սևան ջրատարի բանվոր-ծառայողների համար: Այժմյան գյուղի տարածքը բնակեցվել է 1916 թվականից 1925 թվականն Նախիջևանի Բադամլու գյուղից ներգաղթածներով, ինչպես նաև Գնդեվազից, Վերնաշենից և այլ վայրերից եկածներով: Նույն շրջանում հարևան տարածքներից Կարմրաշեն են տեղափոխվել նաև ադրբեջանցիներ: 1988 թվականին գյուղի ադրբեջանցի բնակչությունը տեղափոխվեց Ադրբեջան, իսկ նրանց փոխարեն գյուղ ներգաղթեցին մեծ թվով ադրբեջանահայեր, որոնց մեծ մասը հետագա տարիներին տեղափոխվեց այլ բնակավայրեր:

ՀՀ անկախությունից հետո գյուղի երիտասարդության նախաձեռնությամբ տեղանունները, որոնք ունեին թուրք-արաբա-պարսկական ծագում, վերանվանվեցին կարմրաշենցի ճանաչված և նշանավոր մարդկանց անուններով, այդ վայրերում կառուցվեցին հուշաղբույրներ:

Գյուղի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, ինչպես նաև հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությամբ:

Գյուղն ունի դպրոց և բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Կարմրաշեն գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 24 հուշարձան: